ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

«Ավանդական բժշկության համալսարան» առևտրային կազմակերպությունը (այսուհետ ԱԲՀ) ՀՀ ՈԱԱԿ հիմնադրամի կողմից հավատարմագրվել է 2020թ.-ին: Համալսարանն իրականացնում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բժշկական բարձրագույն երկու՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրեր:

Հիմք ընդունելով Ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները և դիտարկումները՝ ԱԲՀ-ում սկսած 2020-2021 ուստարվանից իրականացվում են հիմնարար բարեփոխումներ, ինչպես կառավարման, այնպես էլ ուսումնական գործընթացներում:

Ուսումնական գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, համաձայն ԱԲՀ-ի 2020-2025թթ. ՌԶԾ-ի 5.3. կետի պահանջների, ստորաբաժանումների համար մշակվեց և ներդրվեց իրենց գործունեության պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ՝ *կրթական գործունեություն, ուսանողակենտրոն քաղաքականություն, արդիական հետազոտություններ և նորարարություններ, որակի ապահովման ներքին համակարգ* ուղղություններով: Այն ամբողջովին բխում է ԱԲՀ-ի գործող ՌԶԾ-ի նպատակներից և խնդիրներից:

Ստորաբաժանումների պլանավորումն իր մեջ ներառում է՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ, նշված հստակ վերջնարդյունքներ և վերջնաժամկետներ:

Համալսարանում գործող 2 ֆակուլտետներում առկա են 8 ամբիոններ:

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

№	Ամբիոն	Աշխատակից	Գիտ. թեկնածու	Դոկտոր, պրոֆ.	Դասախոս	Ուս. օժանդակ	Միջին տարիք
1.	«Թերապևտիկ առարկաներ»	11	1	--	10	--	40
2.	«Ստոմատոլոգիական»	10	2	--	7	1	41
3.	«Բժշկակենսաբանական առարկաներ»	14	7	1	5	1	41
4.	«Սոցիալական բժշկություն»	8	2	--	6	--	42
5.	«Հումանիտար առարկաներ»	9	3	--	5	1	47
6.	«Վիրաբուժական առարկաներ»	12	3	2	7	--	41
7.	«Բնագիտական առարկաներ»	11	6	--	4	1	44
8.	«Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության»	8	3	-	5	1	50

Աղյուսակ 2

№	Ամբիոն	Ուս. ռեսուրսներ	Գիտ.հետ. աշխ.	Վերապատ.	Ուս. նյութերի էլ. ռեսուրսներ	Դասալսումներ
1.	«Թերապևտիկ առարկաներ»	Բավարար	--	1	Առկա են	16
2.	«Ստոմատոլոգիական»	Բավարար	-	--	Առկա են	16
3.	«Բժշկակենսաբանական առարկաներ»	Բավարար	18	1	Առկա են	25
4.	«Սոցիալական բժշկության»	Բավարար	-	1	Առկա են	14
5.	«Հումանիտար առարկաներ»	Բավարար	2	1	Առկա են	12
6.	«Վիրաբուժական առարկաներ»	Բավարար	--	6	Առկա են	19
7.	«Բնագիտական առարկաներ»	Բավարար	12	12	Առկա են	17
8.	«Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության»	Բավարար	10	1	Առկա են	9

Այսպիսով, 8 ամբիոնները ժամանակին ներկայացրել են 2020-2021 ուստարվա կատարողական զեկույցները համաձայն գործող ձևաչափի:

Կատարողականների ուումնասիրության և վերլուծության արդյունքում պարզվեց.

1. Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 43:
2. Որոշ ամբիոններում առկա են դասախոսների թափուր տեղեր (Ստոմատոլոգիա – 1, Բժշկակենսաբանական – 3):
3. Բոլոր 8 ամբիոնների վարիչները մասնակցել են գիտական խորհրդի հերթական նիստերին:
4. Ամբիոնները հաշվետվությանը կից ներկայացրել են ֆակուլտետների քանակական և որակական առաջադիմության տվյալներ՝ ըստ կիսամյակների, ամբիոնում դասավանդվող առարկաների, սակայն, ըստ առարկաների, ուսանողների առաջադիմության համեմատական վերլուծություն չեն կատարել, որը հնարավորություն կտար որոշ հետևություններ անել, բացահայտել այս կամ այն առարկայի դասավանդման, գնահատման հետ կապված մի շարք հարցեր:
5. Իրականացվել են դասալսումներ՝ հիմնականում փոխադարձ, ամբիոնի վարիչի կողմից, միջինը՝ 16 դասալսում: Դասալսումների արդյունքների մասին չի զեկուցվել գիտխորհրդի կամ ռեկտորատի նիստերին:
6. Գիտահետազոտական աշխատանքներ առկա են «Բնագիտական առարկաների», «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում, որոնց թիվը զգալի նվազել է նախորդ տարիների համեմատ:
7. Ուսանողներին խորհրդատություն տրամադրվել է հիմնականում բոլոր ամբիոնների կողմից:
8. Չնայած հաշվետվությունները կազմվել են մեկ միասնական ձևաչափով մշակված աշխատանքային պլանների համաձայն, սակայն այն չէր կարող ամբիոնների հաշվետվությունների այդքան նմանություն թելադրել. հաշվետվություններում բացակայում է վերլուծական մոտեցումը, հատկապես այն, թե ամբիոնը ինչ խնդիր է դրել իր առջև, որքանով է այն իրականացրել, ինչ խնդիրներ են մնացել անկատար, չլուծված, որոնք են նրանց գործունեության արդյունավետության խոչընդոտները:
9. Որոշ ամբիոններ տպիչ և պատճենահանող սարքի կարիք ունեն:
10. Բացակայում է ամբիոնի գործունեության մասին եզրակացությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համալսարանում գործող կատարողականի նոր ձևաչափով բոլոր ամբիոնները ներկայացրել են իրենց պլանով նախատեսված գործողությունների վերաբերյալ զեկույց, սակայն՝

1. բացակայում են վերլուծական և համեմատական մոտեցումները,
2. կան տարբեր ամբիոնների զեկույցներ, որոնք թե' բովանդակությամբ և թե' կառուցվածքով գրեթե նույն էին:
3. Մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ամբիոններն ունեն գիտական աստիճան ունեցող աշխատակիցներով համալրման կարիք, մասնավորապես՝

№	Ամբիոն	Աշխատակից	Գիտ. թեկնածու	Դոկտոր, պրոֆ.	Դասախոս
1.	«Թերապևտիկ առարկաներ»	11	1	--	10
2.	«Ստոմատոլոգիական»	10	2	--	7

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել սեմինարներ ամբիոններում վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակով:
2. Հաջորդ ուստարվա կատարողականները ներկայացնել համեմատական վերլուծություններով:
3. Ամբիոններում պաշտոնների թափուր տեղերի առկայության դեպքում անհապաղ դիմել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
4. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ պարբերաբար քննարկել ուսումնական գործընթացին առնչվող հարցերը և արձանագրել:
5. Իրականացնել ամբիոնների փաստաթղթերի ուսումնասիրություն, հանդիպումներ դասախոսների հետ:
6. Ուսումնական և վարչարարության գործընթացների բարելավման, արդյունավետության բարձրացման հետ կապված կոնկրետ առաջարկությունները գրավոր ներկայացնել ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորին: